«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ Գնումների

գործընթացի իրականացման կարգի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» Փակ բաժնետիրական ընկերության կողմից JET A1 ավիացիոն վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվող մրցույթի

1. Սույն հայտարարության տեքստը հաստատված է «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի (այսուհետ` ԱՄՕ) Տնօրենի հրամանով ձևավորված մրցույթի հանձնաժողովի կողմից և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի համաձայն:
2. Մրցույթի ծածկագիրը` ԱՄՕ-ԱՎՄ-69/2/26:
3. ԱՄՕ-ի գտնվելու վայրն է ք. Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, ԱՄՕ-ի շենք:
4. ԱՄՕ-ն հայտարարում է իր Գնումների Գործընթացի Կազմակերպման Կարգով սահմանված մրցույթի ընթացակարգ` ընկերության կարիքների համար ավիացիոն վառելիքի ձեռքբերման նպատակով:
5. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան գնման պայմանագիր (այսուհետ` Պայմանագիր):
6. Կնքվելիք Պայմանագրի կատարման պահանջվող ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պատշաճ կատարման ժամանակահատվածն է:
7. Ցանկացած իրավաբանական անձ, կարող է մասնակցել մրցույթին: Մրցույթին մասնակցելու իրավունքի սահմանափակումները «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա սահմանված են ԱՄՕ-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգով:
8. Մրցույթի հրավերը հրապարակված կլինի նաև ԱՄՕ ինտերնետային կայքում: ԱՄՕ-ի ինտերնետային կայքի հասցեն է www.zvartnots.aero :
9. Հայտերը ներկայացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:
10. Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
11. Մրցույթի անցկացման, հայտերի ներկայացման, հաղթողին որոշելու, ինչպես նաև մրցույթի ընթացակարգին վերաբերվող այլ գործընթացները նկարագրված են ԱՄՕ-ի գնումների գործընթացի իրականացման կարգում և հրավերում:
12. Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, ԱՄՕ-ի շենք հասցեում գտնվող, ԱՄՕ-ի Գնումների բաժին:
13. Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել գրավոր gusargsyan@aia-zvartnots.aero կամ զանգահարել 010 49-30-00 ներք. 7205, 098 208279 հեռախոսահամարով:
14. Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ